ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Կորեայի Ժողովրդական Ժողովրդավարական Հանրապետության կառավարության միջև մշակութային համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Կորեայի Ժողովրդական Ժողովրդավարական Հանրապետության կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

ելնելով ինքնիշխանությունը, հավասարությունը հարգելու, փոխշահավետության և ներքին գործերին չմիջամտելու սկզբունքներից,

նպատակ ունենալով ամրապնդել կապերը մշակույթի բնագավառում և զարգացնել երկու երկրների ժողովուրդների միջև բարեկամական հարաբերությունները,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Կողմերը կապեր կհաստատեն երկու երկրների գիտական, կրթական, գրական, արվեստի, մարզական, հրատարակչական հիմնարկների և զանգվածային լրատվական միջոցների միջև և կխրախուսեն մշակութային համագործակցությունն ու փոխանակումները:

Հոդված 2

Կողմերը կխրախուսեն մշակույթի բնագավառում պատվիրակությունների, ինչպես նաև գեղարվեստական և մարզական խմբերի, մասնագետների և գործիչների փոխանակումը՝ Կողմերի նվաճումներին ծանոթանալու և փորձի փոխանակման նպատակով:

Հոդված 3

Կողմերը կաջակցեն գրական ստեղծագործությունների թարգմանությանն ու հրատարակմանը, տպագիր հրատարակությունների, տեղեկատվական փաստաթղթերի, կինոնկարների և տեսագրությունների և այլ փոխանակումներին մշակույթի բնագավառի համապատասխան հիմնարկների միջև:

Հոդված 4

Կողմերն իրենց երկրներում կկազմակերպեն մյուս Կողմի երկրի մասին տեղեկացնող ցուցահանդեսներ, կինոդիտումներ,

հեռուստառադիոհաղորդումներ, գրքերի հրատարակություններ՝ նվիրված հանրապետությունների օրերին, հիմնական հոբելյաններին և այլ առիթներով, ինչպես նաև կանցկացնեն զանազան մշակութային միջոցառումներ:

Հոդված 5

Կողմերը հնարավորինս կաջակցեն մյուս Կողմի մասնակցությանը իրենց երկրում անցկացվող միջազգային խորհրդակցություններին, փառատոներին, ցուցահանդեսներին և մարզական մրցաշարերին:

Հոդված 6

Կողմերը կնպաստեն իրենց երկրների համապատասխան հիմնարկների միջև արձանագրությունների կնքմանը՝ սույն Համաձայնագրով սահմանված աշխատանքների որոշակիացման համար:

Հոդված 7

Սույն Համաձայնագրի իրագործման համար Կողմերը կհաստատեն մշակութային փոխանակումների որոշակի ծրագիր՝ երկու կամ հինգ տարի ժամկետով: Ծրագիրն ուժի մեջ կմտնի ստորագրման պահից:

Հոդված 8

Սույն Համաձայնագրի իրագործման հետ կապված ֆինանսական ծախսերը Կողմերը կատարում են փոխադարձության հիման վրա, որը յուրաքանչյուր առանձին դեպքի համար կձևակերպվի համապատասխան պայմանագրով:

Հոդված 9

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարելու մասին Կողմերի դիվանագիտական ուղիներով միմյանց փոխադարձաբար ծանուցելու օրվանից և ուժի մեջ է մնում հինգ տարվա ընթացքում:

Համաձայնագրի գործողությունն ինքնաբերաբար կերկարաձգվի հաջորդ հնգամյա ժամանակահատվածով, եթե Կողմերից ոչ մեկը համապատասխան ժամկետը լրանալուց առնվազն վեց ամիս առաջ դիվանագիտական ուղիներով մյուս Կողմին գրավոր չծանուցի Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

Սույն Համաձայնագրում Կողմերի համաձայնությամբ կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք ձևակերպվում են առանձին արձանագրությամբ, որն ուժի մեջ է մտնում սույն Համաձայնագրի

ուժի մեջ մտնելու կարգին համապատասխան և հանդիսանում է դրա անբաժանելի մասը:

Կատարված է Երևան քաղաքում 2002 թվականի ապրիլի 5-ին, երկու օրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, կորեերեն և ռուսերեն, ընդ որում բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2002 թվականի օգոստոսի 23-ից: